ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանք-ներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:
- Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: Ըստ առաջադրանքի պահանջի պետք է ընտրել բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանները: Այդ առաջադրանքներում ճիշտ պատասխանների քանա-կը հարցադրման մեջ **չի նշվում**: Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

**Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:**

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

| Տեսակ | Քանակ | Միավոր |
|---|---|---|
| Ընտրովի պատասխանով | 45 | 45 |
| Կարճ պատասխանով | 15 | 15 |
| Ընդամենը | 60 | 60 |

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

*Ընտրովի պատասխանով*

Ինչպե՞ս է կոչվում պատկերը, որում պարտադիր տրված են առարկայի ճշգրիտ չափերը։(1 միավոր)

1) էսքիզ
2) գրաֆիկական պատկեր
3) տեխնիկական նկար
4) գծագիր

*Կարճ պատասխանով*

Նշվածներից որո՞նք են հացահատիկային մշակաբույսեր։(1 միավոր)

1. Ձավար
2. Բրինձ
3. Ոլոռ
4. Գարի
5. Եգիպտացորեն
6. Բլղուր
7. Հնդկաձավար

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Կ.Հ.Սողոմոնյան: Տեխնոլոգիա, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Եր.«Աստղիկ գրատուն» հրատ.2023
2. Կ.Հ.Սողոմոնյան: Տեխնոլոգիա, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց: Եր.«Աստղիկ գրատուն» հրատ.2023
3. Ժ.Ավետիսյան: Տեխնոլոգիա, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Եր.«Էդիթ Պրինտ» հրատ.2023
4. Ժ.Ավետիսյան: Տեխնոլոգիա, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց: Եր. «Էդիթ Պրինտ» հրատ.2023
5. Ա.Հարությունյան, Ս.Հովսեփյան, Մ.Աղաջանյան, Լ.Վերդյան: Տեխնոլոգիա, հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք: Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2024
6. Ա.Հարությունյան, Ս.Հովսեփյան, Մ.Աղաջանյան, Լ.Վերդյան: Տեխնոլոգիա, հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց: Եր.«Տիգրան Մեծ» հրատ. 2024


**Ծանոթություն:** Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: